ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 5—6 (10—11), Երևան, 1941 թ.

Ս. Ծոլոյան

ԴԵԼՄԻԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ինն երրորդ դարից սկսվում է արաբական ուժեղ պետության անկումը, որի հետևանքով էլ Հայաստանի և Պարսկաստանի մի քանի ժողովուրդներ ու ցեղեր կիսանկախ դրության են հասնում։

Քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերած այդ ցեղերից մեկը, դելմիկ կոչված, որ ապրում էր Պարսկաստանում, Կասպից ծովի հարավակողմը, այնքան է զորեղանում, որ իր տիրապետությունն ընդարձակելու նպատակով, 10—11-րդ դարերում՝ սելջուկների երևան գալուց առաջ, Ատրպատականից հարձակումներ է գործում հարևան երկրների, որոնց թվում նաև Հայաստանի վրա։

Հայ հին գրականության մեջ դելմիկների մասին քիչ տեղեկություններ կան, որոնցից հնարավոր չէ պարզել, թե մարդկային որ ցեղին են պատկանել նրանք՝ թուրքերը են, պարսկական մի ցեղ, քուրդ, թե բոլորովին տարբեր մի ժողովուրդ։

Դելմիկների մասին առաջին հիշատակությունը գտնվում է Մովսես Խորենացու անունով եղած «Աշխարհացույց»-ի թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ օրինակներում։

Այսպես, Վրկանաց (Կասպից) ծովը շրջապատող երկրների մասին համառոտ «Աշխարհացույց»-ի մեջ կարդում ենք՝

«Երրորդ ծով Վրկանի, որ կոչի Կասպից ծով... և սահմանի... յարևելից հարաւոյ Վրկան աշխարհաւն, Մարօք, Դելվօք, Դելմօք[1] և Կասրիւք մինչև ի մուտս Երասխ գետոյ» (Մովսէս Խորենացւոյ մատենագրութիւնք, էջ 592, Վենետիկ, 1843)։

Սուքրյանի հրատարակած ընդարձակ «Աշխարհացույց»-ի մեջ, նույն Վրկանաց՝ Կասպից ծովի սահմանների մասին գրված է.

«Իսկ ըստ հարաւոյ սահմանի Մեղաց աշխարհաւն, որ են Մարք... և մտովք գետոյն որ կոչի Սառառովը, յորում Դերպիկէս գաւառ, զոր կարծեմ Դիլումս[1]. եւ Գեղաւք...» («Աշխարհացույց Մովսէսի Խորենացւոյ, յաւելուածովք նախնեաց», 1881, Վենետիկ, էջ 12)։

Նույն աշխատության մեջ (էջ 40), Պարսկաստանի Փուստի Կապկոհ նահանգին վերաբերող հատվածում կարդում ենք.

«Առե, Գեղան, Շանճան, Դլմունք, Դմբաւանդ, Տաբարբստան....»։

Էջ 40—41-ում, մարաց աշխարհի մասին գրված է.

---

1 Ընդգծումն իմն է—Ս. Շ.։

«Բայց Պտղոմէոս զՄարս յելից (եւ ի հարաւոյ) Կասպից ասէ բնակել,... Կասբ, Քաֆագուշ, Դելք, Դիլումք. և Ռէ և Ասպահան քաղաքք են Մարաց»։

Ինչպես տեսնում ենք, ընդարձակ «Աշխարհացոյց»-ը դելմիկների երկիրը երկու տեղ է նշանակում՝ թե՛ Կասպից ծովի հարավում (էջ 12) և թե՛ Քուստի Կապկոհում (Կովկասյան լեռները) (էջ 40,) վերջինս, իմ կարծիքով, ճիշտ չէ, որովհետև Դիլմունք երկրի հարևան՝ Գեղան, Դմբավանդ (Դեմավենդ լեռ) և Տաբարբստանը գտնվում են Կասպից ծովի հարավում, ոչ թե Կովկասյան լեռների շրջանում։

Բացի Խորենացուն վերագրված «Աշխարհացոյց»-ից, դելմիկների մասին հիշատակում է նաև VII դարի հայ պատմիչ Սեբեոսը։

Պատմելով արաբների դեմ մարերի ձեռնարկած ապստամբության մասին, Սեբեոսն ասում է, որ մարերը

«ապաւէն և թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց... դժիր և զքաջ ազգացն զաւրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Դելն[1] և Դելումն»[2] (Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, էջ 150, Երևան, 1939 թ.)։

Վերևում, Խորենացու «Աշխարհացոյց»-ից մենք տեսանք, որ Մարաց դավառն ընկնում է Կասպից ծովից հարավ, Ատրպատականի սահմաններում, որտեղ և մարերի հետ խառն ապրել են նաև դելմիկները, հետևաբար, Սեբեոսի պատմածն ու Խորենացու «Աշխարհացոյց»-ից վերցված տեղեկությունները իրար լրացնում են։ Այդ տեղեկություններից պարզվում է, որ դելմիկները Պարսկաստանի Ատրպատական նահանգի բնիկ ժողովուրդն են եղել և ապրել են այնտեղ վաղ ժամանակներից ի վեր։

Թվում է, թե դելմիկները, զորեղանալուց հետո, չեն մնացել միայն Կասպից ծովի հարավում՝ իրենց նախկին բնակավայրերում, այլ շարժվել են դեպի արևմուտք, դեպի Ուրմիո լճի արևմտյան ափերը։

Այս ենթադրությունը հավանական է դառնում նրանով, որ նախ՝ դելմիկների արշավանքներից մեկը՝ դեպի Աղբակ և Անձևացիք տեղի է ունեցել Պարսկահայքի սահմաններից, երկրորդ՝ Ուրմիո լճի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող Դիլման քաղաքի անունը, ըստ իս, կարող է առաջացած լինել դելմիկ անունից։

---

[1] Դիտելի է, որ ընդարձակ «Աշխարհացոյց»-ից վերցված երեք մեջբերումներն էլ Դելմաց աշխարհին հարևան Դելն անունով երկիր չունեն, այլ ունեն Դելք կամ Դեղ և կամ Գեղան։ Այսպես՝

էջ 12—«Դիլումս և Գեղ»։
էջ 40—«Գեղան, Դլմունք»։
էջ 41—«Գելք և Դելումք»։

Սրանից պարզվում է, որ դելումների—դելմիկների հարևան երկիրը ոչ թե Դելն պիտի լինի, այլ Դելն կամ Գեղան, ներկա ժամանակների Իրանի Գիլան գավառը։

Անկասկած, արտագրողների անուշադրության հետևանքով Գ տառը փոխվել է Դ-ի։ Պատկանյանն իր հրատարակած Սեբեոսի Պատմության մեջ «Դելն» բառի կողքին դրել է (Գելն), առանց որևէ բացատրության (Պատմ. Սեբէոսի ի Հերակլն, էջ 147, գլուխ Լէ Ս. Պետերբուրգ)։

Իմ կարծիքով, Սեբեոսի Պատմության մեջ «Դելն» բառը պետք է դարձնել «Գելն»։

[2] Ընդգծումն իմն է—Ս. Շ.։

Սեբեոսից հետո, դելմիկներին որպես Պարսկաստանի բնիկ ժողովուրդ հիշում են նաև Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և Վարդան Բարձրբերդցին։

Անեցին խոսելով X դարում Պարսկաստանում արաբական պետության թուլացման և դրա հետևանքով մահմեդական էմիրների հարուցած խռովությունների մասին, գրում է.

«Եւ որդին Ապլոլփոյ ի Դիլմաց աշխարհին, և այլք ոմանք ի տեղիս տեղիս խռովութիւնս յարուցեալ ջանային բռնութեամբ տիրել իրերաց» (էջ 96)։

Կիրակոս Գանձակեցին պատմելով թաթարների գլխավոր Չարմաղ Նուինի՝ Խորասանից Ջելալեդդինին փախցնելը, շարունակության մեջ ասում է.

«Եւ ինքեանք [թաթարները] կարգ առեալ՝ աւերեցին զամենայն աշխարհս Պարսից և զԱտրպատական և զԴիլմաց[1]. և կարգաւ սրբեցին զամենայն, որպէս զի մի ինչ մնասցէ» (էջ 221)։

Դելմիկների մասին ամենավերջին տեղեկություն տվող պատմագիր Վարդան Բարձրբերդցին ասում է, թե երբ XI դարում, Խորասանցի Սըբըք-թանի որդի Մահմուտը զորեղանալով դեպի Ռեյ քաղաքն է արշավում

«... Տէրն Ռէոյ Մաջադաւլայ Ռըստամ երեք աւուրբք յառաջ առեալ զԴելմիկսն[2], եւ ընդ առաջ նորա» (էջ 128, Մոսկվա)։

Սրանք են այն տեղեկությունները, որ մենք գտնում ենք հայ հին պատմական և աշխարհագրական մատենագրության մեջ դելմիկների հայրենիքի և բնակավայրերի մասին։

Ինչպես վերևում ասացինք, դելմիկների նվաճողական ձեռնարկումների վերաբերյալ ոչ մի տեղեկություն չունենք մինչև X դարը, երբ նրանք առաջին անգամ արշավանքներ են սկսում դեպի Հայաստան։ Այս արշավանքներից առաջինը տեղի է ունենում 914 թվականից քիչ հետո, որի մասին Մ. Կաղանկատուացին գրում է.

«Ի վերայ այսոցիկ անցելոց ժամանակաց՝ [914 թ.] սպառի ազգն այն Տաճկաց [արաբների], և երևի ազգ այլ, զոր Դելմիկս կոչեն, յորոց գլխաւոր ոմն եկեալ Սալար անուն, և համատարած սփռեալ զիւր զաւրացանն, տիրէ Աղուանից, Պարսից, և Հայոց. և եկեալ ի Պարտաւ՝ իւրացուցանէ զայն իսկոյն» (Մ. Կաղանկատուացի, էջ 385, Թիֆլիս, 1913 թ.)[3]։

Դելմիկների երկրորդ արշավանքը տեղի է ունենում դեպի Վասպուրա-

---

1 Ընդգծումներն իմ են—Ս. Տ.։

2 «Դելմիկը, ժողովուրդ Տիլէմ նահանգի կամ Դելմաստանի, ի հարաւոյ Կազպից ծովու ի սահմանս բարձու Տեմաւենտ լերին»։

Վարդան Բարձրբերդցու Պատմության Վենետիկի հրատարակիչները հետևյալ ծանոթությունն են ավելացնում այստեղ։

3 Ճիշտ նույն օրերին Աղվանից աշխարհն է ասպատակում Ռուզիկ կոչված մի նոր ժողովուրդ և տիրում Պարտավ մայրաքաղաքին։ Դելմիկների գլխավորը՝ Սալարը թեև աշխատում է նրանց դուրս քշել երկրից, բայց այդ նրան չի հաջողվում, մինչև որ իրենք՝ ռուզիկները ինքնաբերաբար հեռանում են, տանելով իրենց հետ հարուստ ավար (Մ. Կաղանկատուացի, էջ 385—386)։

կան՝ Գագիկ Արծրունու կենդանության օրերին։ Այս արշավանքի մասին պատմագիր Թովմա Արծրունին ասում է.

«Ցաւուրսն յայնոսիկ մասն ինչ ի զօրաց Դելմկաց դիմեալ, անցանել կամելով յաշխարհն Ասորեստանի. և հասեալ ի քաղաքն Հադամակերտ և ի գաւառն Աղբաց, գերիեալ զինչս և գերեալ զկանայս և զորդիս»[1]։

Դելմիկները հասնում են մինչև Անձևացյաց գավառը, որտեղ և նրանց վրա հարձակվում են Գագիկ Արծրունու զորքերը, ջարդում նրանց և գերիներին ազատում[2] (Թ. Արծրունի, էջ 302, Պետերբուրգ)։

Թվում է, թե X դարում դելմիկների տիրապետությունը, հատկապես Պարսկահայքի շրջաններում, արդեն հաստատուն բնույթ է կրել։

Ըստ Ուռհայեցու, 975 թվականի մոտերը, Անձևացյաց Դերենիկ թագավորի նախկին զորավար Աբլղարիբի[3] ենթգությամբ և հրավերով, Հեր գավառի ամիրան՝ Աբլհաճը մտնում է Անձևացյաց գավառը, կոտորում է հանկարծակիի եկած հայ զորքերին և գերի վերցնելով Դերենիկ թագավորին՝ հեռանում (Ուռհայեցի, էջ 30—33, էջմիածին)։

Որ այս Աբլհաճը դելմիկ է, հաստատվում է հետևյալով. Ասողիկը պատմում է, որ երբ Բագրատունի Սմբատ Բ թագավորը 982 թվականին հարձակվում է իր հորեղբոր՝ Կարսի Մուշեղ թագավորի վրա, վերջինս իրեն օգնության կանչեց «զԱբլհաճայ Դելմաստանի, թոռն Սալարին[4], ամիրայ պարսիկ» (Ասողիկ, էջ 188)։

Աբլհաճը մտնելով Հայաստան, հասնում է մինչև Շիրակ և մի շարք վնասներ տալուց հետո, վերադառնում է։

Ո՞ր շրջաններումն էր տարածվել Դելմաստանին տիրող Աբլհաճի իշխանությունը, այս մասին որոշ տեղեկություն ենք ստանում Ասողիկի հետևյալ պատմածից։

Վասպուրականի հյուսիսային մասի Գողթն գավառի Աբուդլուսի էմիրը հարձակվում է Աբլհաճի վրա, և հաղթելով վերջինիս, գրավում է նրանից «զԴուին և զամենայն քաղաքս նորա» (Ասողիկ, էջ 189)։

Աբլհաճը փախստական է դառնում և զանազան տեղեր թափառելուց հետո սպանվում է իր ծառաների ձեռքով (էջ 189)։

Ուռհայեցու և Ասողիկի տված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի հարավ-արևելյան սահմանների վրա գտնվող դել-

---

[1] Նորայր Բյուզանդացին՝ Թովմա Արծրունու պատմագրությունը քննելիս, դելմիկների մասին ասում է, որ սրանց իշխանությունն սկսվեց 932 թվականին, իսկ Վասպուրականում նրանց կատարած հարձակումը դնում է 937—939 թվականներին («Բազմավէպ», 1905, էջ 207)։

[2] Գուցե Կաղանկատուացու և Թովմա Արծրունու հիշած այս երկու արշավանքները միևնույն տարում և միևնույն ժամանակներում պատահած լինեն. ես տարբեր դեպքեր համարեցի դրանք, որովհետև նախ՝ երկուսի ժամանակն էլ անորոշ է, երկրորդ՝ մեկը պատահել է Աղվանքում, իսկ մյուսը Հայաստանում՝ Վասպուրականում։

[3] Այս Աբլղարիբի մասին կարդալ Ասողիկ, էջ 189—190։

[4] Այս Սալարին ես համարում եմ Մ. Կաղանկատուացու հիշած դելմիկների առաջին գլխավոր Սաղարը, որովհետև թե տարեթվերն են համընկնում և թե Սաղար և Սալար անունները բոլորովին նույնն են, նկատի ունենալով, որ հին հայերենում հաճախ «լ»-ի փոխարեն որպես լծորդ գործածվել է «ղ» տառը։

միկ Աբլհաճի իշխանությունը տարածված է եղել Դվինից մինչև Պարսկահայք, ընդգրկելով Դվին, Նախճավան, Խոյ, Սալմաստ և Դիլման քաղաքները և կամ այն երկրները, որոնց մեջ գտնվում են հիշյալ քաղաքները։

Սալարի թոռ Աբլհաճի մահվանից հետո, 987 թվականին՝ Ատրպատականի մի ուրիշ էմիր, Ռովտի որդի Աբլհաճը հարյուր հազարանոց պարսկական բանակով հարձակվում է Գողթնի ամիրա Աբուդլուվի վրա և «հանէ ի նմանէ զքաղաքն Սալարին», գրավում է Դվինը և սպառնալիքով հարկ է վերցնում հայերից (Ասողիկ, էջ 198—199)։

Այս Աբլհաճն էլ, իմ կարծիքով, դելմիկ է եղել, որովհետև նախ՝ ատրպատականցի է, երկրորդ՝ Աբուդլուվի ձեռքից Սալարի հողամասերը վերցնելով՝ կարծես թե տոհմական կալվածների հետևում է կատարել։ Այս Աբլհաճի դելմիկ լինելու վերաբերյալ իմ ենթադրությունը հաստատվում է, ըստ իս, նաև Ասողիկի հետևյալ տեղեկությունով։

Բագրատունի Գագիկ Ա թագավորի օրերին՝ 998 թվին, Ատրպատականի էմիրը, Ռովտի թոռը և հիշյալ Աբլհաճի որդին՝ Մամլանը մտնելով Հայաստան, հասնում է մինչև Ապահունիք գավառը։ Մամլանի դեմն է դուրս գալիս հայոց և վրաց միացյալ բանակը։ Նախքան պատերազմն սկսելը, ատրպատականցիները՝ «ճակատ պատրաստէին բազմակրկին յօրինուածով, ռազմ յօրինէին ընդ երեսս լայն դաշտին դելմաստանեան վահանափակովն...»[1] (Ասողիկ, էջ 271)։

Ըստ իս, վերևում ընդգծված բառերը ցույց են տալիս ճակատ կազմելու մի ձև, որ գործադրվել է դելմաստանցիների (դելմիկների) կողմից, և որը նրանց անունով էլ կոչվել է «դելմաստանյան վահանափակ»։ Սրանից կարելի է հետևցնել, որ Մամլան և իր նախնիներն էլ դելմիկ ժողովրդի մի ուրիշ ճյուղին են պատկանել։

Դելմիկների վերջին արշավանքի մասին պատմում է Մատթեոս Ուռհայեցին, համարելով այն 971 թվականի ընթացքում Հայաստանում տեղի ունեցած քաղաքական բոլոր անցուդարձերից վերջինը։

«Յայսմ ժամանակի զօրաժողով արարեալ թագաւորն Դելումաց և յանկարծիս գայր հասանէր ի Նիզ գաւառն Հայոց՝ մերձ ի յամուրն Բջնի...» (էջ 11)[2]։

Ինչպես տեսնում ենք, պատմագիրը դելմիկների թագավորի անունը չի տալիս և չի ասում նաև, թե նրանք որ կողմից են եկել, սակայն առանց կասկածելու կարելի է ընդունել, որ այս արշավողները եկել են Ատրպատականից, մանավանդ որ Վարդանը հայտնում է, թե նրանք Հայաստան են մտել Նախիջևանի կողմերից։

Այս ասպատակների դեմն է դուրս գալիս Պահլավունի Վասակ իշխանը, որ կռվից հետո սպանվում է Սերկևիլի լեռան վրա, անհայտ մի մարդու ձեռքով։

---

[1] Ընդգծումն իմն է—Ս. Շ.

[2] Նկատելի է հատկապես, որ թեև Մովսես Կաղանկատուացին դելմիկներին նոր, անծանոթ ազգ է համարում, սակայն թե Թովմա Արծրունու և թե Մատթեոս Ուռհայեցու պատմածներից երևում է, որ դելմիկները հայերին ծանոթ և զրացի մի ժողովուրդ են եղել, այնպես, ինչպես պարսիկ, արաբ ու հույն ժողովուրդները։

Կարապետ Կոստանյանը «Գրիգոր Մագիստրոսի թղթեր» խորագրով իր աշխատության առաջաբանում (էջ ԻԸ, 2-րդ ծանոթ.) Գրիգոր Մագիստրոսի հոր՝ Վասակ Պահլավունու մահվան տարեթվի մասին խոսելիս՝ գրում է.

«Այս պատմությունն անում է Մ. Ուռհայեցին, երես 11—14, սակայն նա սխալ է դրել դեպքի ժամանակը 971 թվին, այնինչ Վարդանի թիվն ավելի ուղիղ է՝ 1021-ին»։

Ուռհայեցու տված այս տարեթվի վերաբերմամբ Կ. Կոստանյանից շատ առաջ, բացասական կարծիք է հայտնել նաև Ալիշանը։

«Ըստ կարգի տարեգրութեանց Մատթէի Ուռհայեցւոյ, յորմէ առնուն Վարդան, Սմբատ և այլք, այս դէպք նշանակին յամի 972, յորում և մահն Վասակայ, որ Թուի անմարդ, քանզի հանդիպի 75 ամաւ յառաջ քան զմահ եղբօր իւրոյ Վահրամայ, որ նոյնպէս ի մարտի մեռաւ յամի 1046, թէպէտ և անցեալ զութանամենիւք...» (Այրարատ», էջ 271, ծանոթ. 1)։

Իմ կարծիքով՝ թե Ալիշանը և թե Կոստանյանը Ուռհայեցու իսկական անճշտությունը չեն նկատել։ Պատմագիրը Բագրատունի Գագիկ Ա թագավորի մահը դնում է 971 թվականին, մինչդեռ, ինչպես ընդունված է մինչև այժմ, այն տեղի է ունեցել 1020 թվականին, որով 49 տարվա տարբերություն է առաջանում[1]։

Սակայն պետք է նկատի ունենալ, որ Ուռհայեցին Գագիկի մահից հետո նախ պատմում է նրա որդիների՝ Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև գահի շուրջը բորբոքված կռիվները, Ապիրատ իշխանի մահը Դվինում, և հետո միայն դելմիկների արշավանքն ու Վասակի մահը։ Հետևաբար, առանց ուշադրություն դարձնելու Ուռհայեցոյ տված 971 անճիշտ թվականին, ելնելով դեպքերի վերոհիշյալ հաջորդականությունից, պիտի եզրակացնել, որ դելմիկների այս արշավանքը տեղի է ունեցել 1020-ի վերջերին կամ 1021-ի սկզբներին։

Վարդանն էլ Վասակ Պահլավունու մահը ճիշտ նույն թվականին է դնում։

Պատմագիրն ասում է,

«Ի չորս հարիւր եօթանասուն Թուին [1021] ել Տուղրիլ բէկն և պատահեաց նմա ի Նախջավանի Լիպարիտ հինգ հազար հեծելովք. և փախեաւ յահագին բազմութենէն։ Եւ ի գալ Թուրքին ի Դուին և սիռնալ տսպատակս՝ ել ընդդէմ նոցա քաջն Վասակ, և ցուցեալ մեծ քաջութիւնս՝ գառնայր ի Սերկեւելի՝ և ի հանդչելն սակաւ մի քնով՝ քարիւ հարեալ զդլուխն այր մի յանդէտս՝ մեռանի»[2] (էջ 131, Մոսկվա)։

---

[1] Ուշադիր ընթերցողը անշուշտ նկատած կլինի, որ Ուռհայեցին պատմական դեպքերի հաջորդականությունը խառնում է՝ նախ դնելով (էջ 7) Գագիկ Ա-ի մահը և ապա (էջ 17) Աշոտ Դ Ողորմածի պատմությունից մի դեպք։ Հայտնի է, որ ժամանակով ավելի առաջ է Աշոտ Ողորմածը (952—977 թ. թ.), քան Գագիկ Ա. (989—1020)։

Նկատելի է նաև, որ Ուռհայեցին Աշոտ Ողորմածի և Զմշկիկ կայսրի հարաբերությունները դնում է 972 թվականին (էջ 14—19), նույնիսկ մի քիչ էլ ուշ, իսկ Աշոտի որդի և երկրորդ հաջորդ Գագիկ Ա-ին՝ 961—971-ին։ Պարզ է, որ Ուռհայեցին սխալվում է։

[2] Վասակի աղջիկ Սեդան իր հոր համար թողել է մի անթվական արձանագրություն, որը Կ. Կոստանյանը հարցականով համարել է 1021 թվականին, անշուշտ հենվելով Վարդանի տված տարեթվին (տես «Վիմական տարեգիրք», էջ 28)։

Վարդանը դելմիկներին թուրք համարելով, նրանց հարձակումը կապում է սելջուկ Տուղրիլ-բեկի արշավանքների հետ։ Այդ տեղեկությունն ակադ. Հ. Մանանդյանը ճիշտ չհամարելով՝ ասում է.

«Սելջուկյան Տուղրուլ բեգը 1021 թվին չէր կարող արշավել Հայաստան, որովհետև սելջուկները Բուխարայից իջել էին Խորասան և նվաճել Պարսկաստանի հյուսիս-արևելյան շրջանները 1021 թվից շատ ավելի ուշ՝ 1035—1040 թվականներին»[1]։

Դելմիկների այս վերջին արշավանքի ժամանակի վերաբերյալ ամենաստույգ տեղեկությունը ակադ. Հ. Մանանդյանը համարում է Վասակի եղբայր Վահրամ Պահլավունու Մարմաշենում գրած արձանագրությունը, ըստ որի Վասակի մահը տեղի է ունեցել 1029-ից առաջ[2]։

Հետաքրքրականն այն է, որ Մատթեոս Ուռհայեցու հիշած դելմիկների այս կռիվը Վահրամ Պահլավունին անվանում է «թուրքաց պատերազմ».

«Եւ եղբայր իմ Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմին» (Վիմական տարեգիր», էջ 16, Մարմաշենի արձանագրությունը, «Շիրակ», էջ 148)։

Ակադ. Հ Մանանդյանը իր նույն աշխատության էջ 28-ում ասում է, որ Մարմաշենի 1029-ի արձանագրության մեջ եղած «թուրքաց պատերազմ» բառերից պետք է հասկանալ, որ դելմիկների արշավանքին մասնակցել են նաև թուրքեր։

Սրանով էլ վերջանում է դելմիկների արշավանքների մասին հայկական աղբյուրներից մեզ հասած տեղեկությունները[3]։

Ի՞նչ եղան դելմիկները, կա՞նգ առան նրանք իրենց գրաված վայրերում, թե՞ առաջ շարժվեցին դեպի Հայաստանի այս ու այն կողմերը։ Դժբախտաբար այդ մասին մենք այլևս ոչինչ չենք գտնում հետագա հայ պատմագիրների՝ Այրիվանեցու, Մաղաքիա Աբեղայի և Թովմա Մեծոփեցու մոտ[4]։

Այս ուղղությամբ՝ ավելորդ չէր լինի ընթերցողի ուշադրությունը հրավիրել հետևյալ տեղեկությունների վրա։

---

[1] «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», էջ 28։

[2] Նույնը։

[3] Եթե դելմիկների արշավանքներն ըստ տարեթվերի դասավորելու լինենք, կստանանք հետևյալ պատկերը.

914 թ. մոտերը, Սաջարի արշավանքը Հայաստանի, Պարսկաստանի և Աղվանից աշխարհի վրա։

932 թ. (ըստ Ն. Բյուզանդացու) դելմիկների արշավանքը դեպի Աղբակ և Անձևացյաց երկիրը։

975 թ. Աբլհաճի արշավանքը դեպի Անձևացյաց երկիրը։

982 թ. Սալարի թոռ Աբլհաճի արշավանքը մինչև Շիրակ։

998 թ. Ռովդի թոռ Մամլանի հարձակումը Ապահունիքի վրա։

1021 թ. մոտերը՝ դելմիկների արշավանքը դեպի Նիգ գավառ։

[4] Դելմիկների անունը հայ աղբյուրներում զանազան ձևերով է երևան գալիս, այսպես՝ Մովսես Խորենացուն վերագրված «Աշխարհացույց»-ում կարդում ենք՝ Դ ի լ ո ւ մ ս, Դ ի լ մ ո ւ ն ք։ Սեբեոսը նրանց անվանում է Դ ե լ ո ւ մ, Թովմա Արծրունին՝ Դ ե լ մ ի կ, Մովսես Կաղանկատվացին՝ Դ ե լ ե մ ե ն կ ք, Ս. Անեցին՝ Դ ե լ մ, Մ. Ուռհայեցին՝ Դ ե լ ո ւ մ, Վարդանը՝ Դ ե լ մ ի ս, Կիրակոս Գանձակեցին՝ Դ ե լ մ, իսկ Սմբատ Գունդստաբլը՝ Դ ե լ մ ո ն։

Պարզ է, որ բոլոր ձևերն էլ միևնույն անվան անհշան փոփոխակներն են։

Մինչև 1915 թվականը Խնուսից (Աղահունիք) մինչև Բալու (Զորբորդ Հայք) և Մշից մինչև Դիարբեքիր, ընակվում էր մի ժողովուրդ, որ կոչվում էր Դրմբլիկ կամ Զազա։ Դմլիկները համարվում էին քրդական մի ցեղ, որի լեզուն տարբերություն է ունեցել բուն քրդերենից։

Մեր դրականության մեջ զազաների կամ դմլիկների մասին հետևյալ տեղեկություններն ենք գտնում.

1. Ղուկաս Ինճիճյանն իր «Աշխարհագրութիւն, մասն առաջին, հատոր առաջին. Հայաստան» աշխատության մեջ (էջ 81) Խնուս գավառի մասին գրում է.

«Բնակիչք գաւառիս յազգէս Հայոց, և քուրտք որք խօսին ի լեզու զազայի»։

Վարդոյի գավառի մասին գրում է.

«Գտանին ի սմա գիւղօրէք իբրև 10, որոց բնակիչք քուրտք, զազա կոչեցեալք, և հայք» (էջ 84)։

2. Բարունակ-բեյ Ֆերուհ-խան իր «Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան»[1] (1874 թ.), էջ 53—54-ում գրում է.

[«Դիարբեքիրի քուրդերը] կրոնյուք մահմետական են և շաֆի։ Երկու լեզու ունին, մեկը ընիկ քրտաց լեզուն, որ զանազան լեզուներու խառնուրդ մ'է և մանավանդ պարսկերենին, և մյուսը Զազա ըսված լեզուն, որ առաջինեն բոլորովին տարբեր է...»։

3. Անդրանիկ—«Տերսիմ, ճանապարհորդություն և տեղագրություն» աշխատության (Թիֆլիս, 1900) էջ 158, առաջին ծանոթության մեջ գրված է.

«Տերսիմցիներու լեզուն կատարյալ խառնուրդ մ'է պարսկերենի, քրդերենի (գուրմանճ), թուրքերենի, արաբերենի, հայերենի և մանավանդ զազայերենի (տրմբլի), որ անոնց լեզվի մեջ $^3/_4$ մասը կկազմե...»։

Էջ 161, ծանոթություն 1-ում, մեջ բերելով Թովմա Արծրունու հատվածը դելմիկների արշավանքի մասին, գրում է.

«Մեզ կթվի, թե սոքա միևնույն Դլմիկներն են, որ այժմ Տերսիմի և այլ կողմերը ցրված՝ կճանչցվեն որպես Դրմբլի կամ Տրմբլի անունով, որոնց լեզվով գլխավորապես կխոսին տերսեցիները»։

4. Էլիզե Ռեկլյուն իր «Լազիստան, Հայաստան և Քուրդիստան»[2] գրքի էջ 34-ում գրում է.

«Քրդերի բարբառները... շատ զանազան են միմյանցից...։ Զազա լեզուն, որ խոսվում է Մուշ և Բալուում, շատ նմանություններ ունի Կովկասի օսերի բարբառի հետ»։

5. Պողոս վ. Նաթանյանը «Արտօսր Հայաստանի»[3] էջ 72, 73, 85, 97-ում խոսում է Կրմանջ և Զազա կոչված քրդերի մասին առանց մանրամասնությունների մեջ մտնելու. իսկ էջ 94—95-ում գրում է.

---

[1] Տպված Արմաշում, 1876 թ.։

[2] Թարգմանություն Միքայելի, Վաղարշապատ, 1893 թ.։

[3] Կամ «Տեղեկագիր Բալուս, Քարբերդու, Զարսանճաքի, Ճապաղջուրի և Երզնկայի», 1883 թ., Պոլիս։

«Քուրդերն երկու տեսակ են՝ Զազա և Կրմանջի։ Ասոնք իրարմե լեզվով կտարբերին, բայց կրոնով մահմետական են»։

6. Գարեգին վ. Սրվանձտյանն իր «Մանանա» գրքի էջ 137-ում գրում է.

«[Քրդերի] մեծ մաս մ'ալ զազա կըսվին, որ շատ բազմաթիվ են և առանձին լեզու ունին։ Ասոնք կընակին Մշո և Տիգրանակերտու կողմերը, Խընուս, Վարդո, Ճապաղջուր, Քղի, Տուժիկ և այլն»։

Արդյոք հին դելմիկ և նոր դմլիկ այս ցեղերը որևէ արենակցական-կապ չունեն իրար հետ։

Իմ կարծիքով, այդ կապը շատ հավանական է, որովհետև մենք տեսանք, թե ինչպես դելմիկներն իրենց երկրից մի քանի արշավանք գործելով մտան Հայաստան և առաջ շարժվեցին մի կողմից մինչև Այրարատ, մյուս կողմից՝ մինչև Ապահունիք և Անձևացիք։

Հայաստանի նույն օրերի զինական ուժն ի վիճակի չէր այդ արշավողներին ամբողջապես դուրս քշելու երկրի սահմաններից, ուստի և, դելմիկների որոշ զանգվածներ պետք է որ հաստատված լինեն մեր երկրում։

Բացի այս, շուտով վրա հասան սելջուկների, Զելալեդդինի և թաթարների արշավանքները, որոնք պետք է առաջ մղած լինեն դելմիկներին դեպի արևմուտք, դեպի Հայաստանի խորքը, որտեղ և նրանք մնացել և դարձել են տեղական ժողովուրդ։

Ըստ իս, նոր ժամանակի դմլիկները սերում են հին, պատմական դելմիկներից։